

ԱՐԱՐԱՏ ՍԱՐԳՍԹԱՆ

ՀՀ ՆՊ Կենտրոնական պետական արխիվի տնօրեն

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՋՈՒԳԱԿԱՆ
ԲԱՐԵԿԱՄԸ

Փոքրաթիվ ժողովուրդներն
ավելի կարիք ունեն Մեծ
բարեկամների: Հենց այս-
պիսին է Ֆրիտյոֆ Նանսեն-
ընդ հայ ժողովրդի համար:
Քանի կան ու կլինեն Հայե-
րը, այնքան ժամանակ
նրանք խոր ակնածանքով ու
անհուն սիրով կհիշեն
Նանսենի անունը:

Մակիչ Արզումանյան:



Fridtjof Nansen

1996-ի հոկտեմբերի 10-ին
Նորվեգիայի մայրաքաղաք
Օսլոյում քաղվելու է հա-
վերժության հետ ֆալյու
հռչակավոր գիտնական,
քեևոսխույզ, նախարար-
հորդ, խոշոր մարդասեր,
մեր ժողովրդի անգու-
ցական բարեկամ Ֆրիտյոֆ
Նանսենի ծննդյան 135-
ամյակին նվիրված միջազ-
գային ընդգրկման փաս-
տաթղթերի քննարային
ցուցահանդես, որտեղ

պետք է ներկայացվեն աշխարհի այն բոլոր երկրների արխիվներից, քան-
զարաններից ու գրադարաններից հայտնաբերված Նանսենյան անհրաժեշտ
նյութերը, որոնց հետ այս կամ այն ճանապարհով առնչվել է Մեծ հումանիստը:
Այդ՝ իր քննությունը հզակի, ցուցահանդեսի նախապատրաստման իր համեստ
մասնակցությունն է քերել նաև Հայաստանի Հանրապետության Նորագույն
պատմության կենտրոնական պետական արխիվը՝ տրամադրելով եղած հարյու-
րավոր Նանսենյան փաստաթղթերից մի քանի արժեքավորները:

Խորախորհուրդ է այն փաստը, որ ցուցահանդեսի քաղման պատիվը, քաղմաթիվ
օտարերկրյա ներկայացուցիչների թվում, վերապահված է միայն Ամենայն Հայոց

Կաթողիկոս Նորին Սուրբ Օծուքյուն Տ. Տ. Գարեգին Առաջինին: Նման վերաբերմունքը, մեր կարծիքով, երկու ժողովուրդների միմյանց նկատմամբ փոխադարձ սիրո ու վստահության լուռ արտահայտության դասական դրսևորումն է. որի հիմնաքարը դրվել է Ֆրիտյոֆ Նանսենի կողմից:

«Նանսենը մեծ էր որպես բևեռախույզ, ավելի մեծ՝ որպես գիտնական, և էլ ավելի մեծ՝ որպես մարդ»: Այսպես է բնութագրել Նանսենին նրա հայրենակից և հռչակավոր բևեռախույզ Հարալդ Սվերդրուպը: Ռոմեն Ռուանը նրան կոչել է «Մեր ժամանակի միակ եվրոպական հերոս», իսկ գերմանացի հայտնի դեմոկրատ-լրագրող, Խաղաղության Նոբելյան մրցանակակիր Կարլ Օսեցկին Նանսենին համարել է «Մարդկության բարի հանճար»: Ժամանակակիցները նրան անվանել են «Աշխարհի փառաքան», «Աշխարհի խիղճ»:

Նանսենը հողագեղի բալոր մեջված ու հալածված ժողովուրդների անվերապահ պաշտպանն ու բարեկամն էր՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից:

Նանսենը, խորապես ցնցվելով առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքներից, այն համարեց «խելահեղության մղձավանջ», որը կառավարությունները իրագործում են «իշխանության համար, միայն իշխանության համար»: Նա այդ և հետագա տարիներին ամբողջապես նվիրվեց խաղաղության հաստատման, պատերազմի հեռուստանկների վերացման, ռազմագերիների ու գաղթականների դրության բարելավման համամարդկային հենչուլության գործին, որի շնորհիվ նրան հաջողվեց հարյուր հազարավոր ռազմագերիներ ու գաղթականներ վերադարձնել իրենց հայրենիք: Ուստի բոլորովին էլ պատահական չէին Նոյի-Բեկերի այն խոսքերը, երբ նա ասում էր, որ՝ «Չկար մի երկիր, որտեղ մայրերն ու կանայք արցունքներն աչքերին շնորհակալությամբ չէին շինել Նանսենի սիրագործությունը»:

Այդ համամարդկային ծառայությունը բարձր գնահատվեց: 1922-ի դեկտեմբերին Նանսենին շնորհվեց Խաղաղության Նոբելյան մրցանակ, որի համար պարգևատրվեց 122 հազար կրոնով: Նա այդ ամբողջ գումարը անմնացորդ նվիրաբերեց կարոտյալների օգնությանը:

Ինչպես ինքն է վկայում, նա հայ ժողովրդի պատմությանը ծանոթացել է դեռևս դպրոցական տարիներին, որը ընդամենը սահմանափակվել է գուտ հետաքրքրության շրջանակներում: Սակայն 19-րդ դարի վերջին Թուրքիայի կողմից իր ազատության համար ուժի ելած հայ ժողովրդի նկատմամբ գործադրված գազանությունները, առավել ևս երիտթուրքերի կողմից իրականացրած վայրագ ցեղասպանությունը ցնցեցին Նանսենին: Այդ գործում լուրջ նշանակություն ունեցավ նաև 1920 թ. Ազգերի լիգայում Նանսենի ծանոթությունը Արշակ Սաֆրաստյանի հետ: Վերջինս հետևողականորեն ծանոթացնում էր Նանսենին հայ ժողովրդի անցած ուղուն, նրա պատմական ճակատագրին, անկումներին ու վերելքներին: Այդ կապերը և Նանսենին հասուկ հետևողականությունն ու հետաքրքրությունը, դրանց գումարած Ազգերի լիգայում աշխատանքի բնույթը, հանգեցրին այն բանին, որ հայկական հարցն ու հայ գաղթականությանը Խորհրդային Հայաստան փոխադրելու և տեղավորելու խնդիրները դարձան նրա էությունն ու կյանքի վերջին 10-ամյակի զբաղմունքի հիմնական առարկան: Նա իրավամբ գրում է. «Ինձ դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ այդ նշանավոր ժողովրդի պատմությանը՝ առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից»: Իսկ

ֆորանսիացի ականավոր գրող Հանրի Բարբյուսը գրում էր. «Եթե բաժանես առանձին դրվագների այն ողբերգությունները, որ ապրել է մարդկությունը իր գոյության ավերող ընթացքում. դրանցից ամենասարսափելին, անշուշտ, հայ ժողովրդի մարտիրոսությունն է»:

Հայ ժողովրդի ողբերգական վիճակը խորապես հուզել էր Նանսենին գեռու մինչև հայաստանյան այցելությունը: Այդ անհանգիստ հոգու ու ջերմ սրտի տեր մարդը շտապել էր ծանոթանալ Կ. Պոլսում և Հունաստանում հանգրվանած հույն և հայ գաղթականության կյանքին: Մատթևոս Արամ Գալանտերի վկայությամբ 1922 թ. հուլիսի 1-ին թագմիսյան թաղմիսից հանդիպել ու զրուցել է Նանսենի հետ, որը խիստ մտահոգված էր հայերի վիճակով. «Դժվար էր երևակայել մեկը, գրում է նա, որ ավելի եռուսանաս ու տխուր ըլլար, երբ խոսակցությունը հայերի մասին էր... Իր խորունկ կապույտ աչքերուն մեջ վիշտ կկարդացվեր, երբ կայտմեք իր տեսածները, իր կատարած ջանքերն ու դիմումները հայերի համար: Հանկարծ ըսավ ինձ. «Զենք գիտե՞ր, թե ինչ պետք է ընենք հայերու մասին...», տեսակ մը ճուսաճատ պողոթնումով և թողնողով մը»:

Այդ սարսափներից հայության փրկության հույսերը Նանսենը կապում էր Ազգերի լիգայի հետ և բողոքովին էլ պատահական չէր, որ Ազգերի լիգայի հենց առաջին նստաշրջանում նրա առաջարկությամբ մտցվեց Հայաստանը Ազգերի լիգայի անդամ ընդունելու հարցը: Ազգերի լիգան և նրա անդամ մեծ տերությունները, պատմաառաքնելով Հայաստանի սահմանների անորոշությունը, առարկեցին խնդրի դրական լուծմանը: Մեծ մարդասերը հանդես գալով այնտեղ, զգուշացնում էր. «Նախքան մենք այստեղ կվիճենք սահմանների հարցի շուրջ, պետք է հայ ժողովրդին փրկել ոչնչացումից, որպեսզի մարդ մնա այդ երկրում բնակվելու համար... Ամեն մի օրն էլ խիստ կարևոր նշանակություն ունի: Կարող է պատահել այնպես, որ մինչև մենք այստեղ վիճում ենք, այնտեղ կկոստորվի հայ ժողովուրդը»:

Այդպես էլ եղավ: Ազգերի լիգան մերժեց Բեռլինյան հարցը, իսկ Արևելյան Հայաստանում բազմահազար հայեր յաթաղանի գոհ դարձան, և բազմաթիվ ֆաղափներ ու գլուղներ ավերվեցին ու թալանվեցին ֆեմալական հորդանների կողմից: Նանսենը, բնութագրելով հայ ժողովրդի նկատմամբ կիրառված գազանությունները, գայրությունը շեշտում է, որ «թուրքական գազանությունները իրենց չափերով ու նողկալի դաժանությամբ գերազանցում են պատմությանը հայտնի բոլոր գազանությունները», և հայ գողգոթան էլ «իր նմանը չունի պատմության մեջ»:

Նաև նրա բազմաթիվ հարցապնդումներից հետո, վերջապես, Ազգերի լիգայի խորհուրդը 1924-ի հունիսի 12-ի որոշմամբ հաստատեց «Նանսենի նախաձեռնությունը՝ ինքնության վկայագրեր տալու հայ գաղթականներին»: Նանսենյան անձնագրերը, դառնալով օտար ավերում իրենց թշվառ գոյությունը որոշ չափով բարելավելու միջոց, այնուամենայնիվ չէին լուծում գաղթականության խնդիրը ընդհանրապես: Ահա թե ինչու Նանսենը ամբողջապես իրեն նվիրեց հայ գաղթականությանը Խորհրդային Հայաստան փոխադրելու և նրանց համար նպաստավոր պայմաններ ստեղծելու գործին:

Նա, խորապես ուսումնասիրելով այդ հարցը, 1924 թ. սեպտեմբերի 5-ին գեղուցեց Ազգերի լիգայում, որը որոշեց Նանսենի գլխավորությամբ ստեղծել մի հեղինակավոր հանձնաժողով՝ Խորհրդային Հայաստանում անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարելու և այդ երկրամասում հայ գաղթականությանը տեղա-

վորելու նպատակով: Նախնեի այդ զեկուցումը վերացական հիմքի վրա չէր կազմված: Նա իր ներկայացուցիչների միջոցով, սկսած 1920-ականի սկզբներից, սերտ կապեր էր ստեղծել Հայաստանի համապատասխան ներկայացուցիչների հետ. կատարվել էր անհրաժեշտ ֆննդություն:

Ազգերի լիգայի որոշմամբ Նախնեի գլխավորած հանձնաժողովը 1925 թ. հունիսի 4-ին Տրիեստից «Սամիրամիդա» /Շամիրամ/ շոգենավով Միջերկրական ծովով ուղևորվում է Հայաստան:

Նախնեը ծրագրել էր ճանապարհին ծանոթանալ Հունաստանում և Կոստանդնուպոլսում կուտակված դեռևս 1922 թվականին ֆեմալական վայրագություններից 1,5 միլիոն հույն և 45 հազար հայ գաղթականների ողբերգական վիճակին և պարզել, թե հայ փախստականների այդ թվաքանակից որքանն են ցանկանում Հայաստան փոխադրվել: 11 հազար հայ փախստականներ անմիջապես տալիս են Հայաստան փոխադրվելու մասին իրենց համաձայնությունը: Այդ կապակցությամբ Նախնեը հանդիպում է Հունաստանի ու Կոստանդնուպոլսի հայկական ներկայացուցիչների հետ և ստանում նրանց համաձայնությունը:

64-ամյա Նախնեի գլխավորությամբ հանձնաժողովը 1925-ի հունիսի 16-ին ժամանում է Խորհրդային Հայաստան, որին Լենինականում /Գյումրի/ ջերմորեն դիմավորում է Հայաստանի կառավարական հանձնաժողովը՝ Արամայիս Երզնկյանի գլխավորությամբ: Ողջույնի խոսքերի փոխանակության ժամանակ Նախնեը ասաց, որ «իմեն ուրախ ե Հայաստանում գտնվելու և Արարատյան դաշտավայրում հայ ժողովրդի հետ հանդիպելու համար, մի ժողովուրդ, որի անցյալն ու պատերազմի ժամանակ ունեցած ծանր փորձություններն իրեն լավ հայտնի են»: Հունիսի 17-ին Նախնեի հանձնաժողովը ժամանում է Երևան ու անմիջապես ընդունվում ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինի և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանի կողմից, որտեղ Նախնեը հաղորդում է իր առաջնության նպատակը՝ նշելով, որ «եկել է գաղթականների տեղափոխության խնդրի հնարավորությունները պարզելու, եթե կառավարությունը հող տրամադրելու լինի»՝ նշելով, որ «տեղափոխման և տեղավորման հետ կապված ծախսերը կհագցվեն արտասահմանից»:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, որը գաղթականության հայրենադարձության հարցը համարում էր պետական կարևոր նշանակության խնդիր, բնականորեն ոչ միայն համաձայնվում, այլև բոլոր անհրաժեշտ պայմաններն է ստեղծում հանձնաժողովի գործունեության համար:

Նախնեի հանձնաժողովը չէր գործում մեկուսի: Նրան ոչ միայն ուղեկցում, այլև համակողմանի օգնություն ու աջակցություն էին ցույց տալիս հայ մասնագետները, որը որոշակիորեն նպաստեց հանձնաժողովին՝ ծանոթանալու և ուսումնասիրելու Հայաստանի անջրդի ու մահացած հողերը Սարդարապատի, Ղոնքի /Արուհայթ/, Կարասուխի և Ջանգիրասարի շրջաններում ու որոշել այդ աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ գումարների չափերը:

Հանձնաժողովի ուսումնասիրությունների ընթացքն ու արդյունքները ֆննդարկվում են ՀՍՍՀ Ժողկոմխորհին կից Գաղթականական և Նախնեյան հանձնաժողովների հունիսի 17-ից հուլիսի 2-ը կայացած միացյալ նիստերում և հանգում այն եզրակացության, որ չնայած Խորհրդային Հայաստանում առկա են 100 հազար դեպատին անջրդի հողեր, և որ Սարդարապատի դաշտի յուրացումը կհանդիսանա

գաղթականության տեղավորման հիմնարար միջոցը, այնուամենայնիվ, հլենյով ֆինանսական մեծ ծախսերից, հանձնաժողովը կանգ է առնում Արուսիայթի, Կարասուի և Զանգիբասարի 33 հազար դեսյատին հողերի յուրացման ծրագրի վրա, որի իրականացման դեպքում կտեղավորվեն 25-30 հազար գաղթականներ: Հայաստանի կառավարությունը միաժամանակ համաձայնվում է Նանսենի՝ կառավարությանը ներկայացված 1925 թ. հուլիսի 1-ի հուշագրի բոլոր պահանջներին: Ծրագրով նախատեսված հողատարածքների յուրացման համար պահանջվում է 9 միլիոն ռուբլի /800 հազար ֆունտ ստեռլինգ/, որը պետք է ձեռք բերվեր օտարերկրյա փոխառությունների ձևով:

Անջրդի հողերը ուսումնասիրելու ընթացքում հանձնաժողովը մտնում է Մուլա-Գյուկչա /Բամբակաշատ/ գյուղ, որի 3500 բնակիչներից 2000-ը բարբարոսաբար կոտորվել էին թուրքերի կողմից: Նանսենը այդ առթիվ գրել է. «Այդպիսին է հայ ժողովրդի պատմությունը: Այս լայն աշխարհում կա՞ ևս մի ժողովուրդ, որն անընդհատ ենթարկված լինի նման դաժան տառապանքների: Բայց կա՞ արդյոք մի ժողովուրդ, որը պատմության մեջ ցուցաբերած լինի այնպիսի ամուր կենսահաստատ ուժ՝ քախտի բոլոր դաժան փորձությունների մեջ»: Միաժամանակ, հլենյով Հայաստանում սկսված վերականգնողական և ստացած խոր վերքերի ապափինման գործընթացից, զարմանքով ընդգծում է. «Գուցե ոչ մի երկիր այնքան չի տառապել այս պատերազմում, որքան Հայաստանը, բայց հիմք տարիների հմուտ ու եռանդուն աշխատանքն էպես քարելավել է դրությունը»:

Զնայած խիստ զբաղվածությանը, Նանսենը ունենում է քաղմաթիվ հանդիպումներ, լինում Հայաստանի տեսարժան վայրերում:

1925 թ. հունիսի 19-ին երևանում հրավիրված ուսուցիչների հանրապետական համագումարը նրան ընտրում է համագումարի պատվավոր նախագահ, որի առիթով Նանսենն ասել է. «...որ շատ զգացված է սրտառուչ հանդիպումից, որ ինքը դեռ մանկությունից երազել է լինել Հայաստանում՝ քաղաքակրթության այդ օրրանում, և այժմ, տեսնելով Հայաստանի եին մշակույթի հիանալի հուշարձանները և բնակչության աշխատանքային ու ստեղծագործական ծարավը, վերջնականապես համոզվել է, որ հայ ժողովուրդը այժմյան պայմաններում ամուր կանգնած է իր վերածննդի ուղու վրա»: Նա խոստացավ իրենից կախված ամեն ինչ անել, որպեսզի օգնի հայրենի վերադառնալու արտասահմանում տառապող հայ գաղթականներին:

Նա լինում է երևանի Պետական համալսարանում, որտեղ ընտրվում է համալսարանի Գիտխորհրդի պատվավոր անդամ, և իր շնորհակալական խոսքում ասում է, որ «ինքը չափազանց զգացված է և աշխատելու է ամեն կերպ օգտակար լինելու համալսարանին»:

Նանսենի վրա մեծ տպավորություն է գործում Շիրակի ջրանցքի քաջամարտիկները, որին անձամբ մասնակցում է նա: Այդ կապակցությամբ արտասանած իր խոսքում ասում է. «Հայ ժողովրդի տարեգրության մեջ սկսվում է նոր դարաշրջան... Այս գործը, որից ստացանք հրաշալի տպավորություն, կատարված է ուժեղ ու խելոք ժողովրդի կողմից, որը համեստ միջոցներով, բայց նպատակասլաց կերպով, երկար տարիների տանջանքներից, զրկանքներից, պատերազմի արհավիրքներից ու ավերածություններից հետո, պատրաստ է կառուցելու իր երջանիկ ապագան: Մեր տեսանքներից համոզվել ենք, որ եթե այդ ընդունակ ու նպատակասլաց ժողովուրդը խաղաղություն ունենա, ապա նա արագությամբ

կօգտագործի իր երկրի շատ հարուստ հնարավորությունները և կստեղծի հայրենական նոր օջախներ հազարավոր ու հազարավոր ընտանիքների համար: Ամբողջ փառալակիրք աշխարհի համակրանքն է վայելում Հայաստանի ձեռնբեկությունը՝ ստեղծելու մի ազգային օջախ-ապրելավայր, եթե ոչ բոլոր հայերի համար, ապա այնպիսի օջախ, որին հեռվում գտնվող ամեն մի հայ համարեր իր իսկական հայրենիքը:

Լեհիճականում որդեկորույս մի խումբ մայրեր Նանսենին են ներկայացնում իրենց դիմումը, որում ճշելով միայն 1920 թվականին թուրքերի կողմից գերեվարված 12000 հայ երիտասարդների մասին, շարունակում են. «Մենք տանջված մայրերս, արցունքներն աչքերիս խնդրում ենք Ձեր օգնության ձեռք մեկնել և ազատել մեր դժբախտներին»: Հունիսի 22-23-ին նա շրջագայում է Լեհիճականի ամերիկյան որբամոտներն ու արհեստանոցները, որտեղ ապրում, սովորում ու աշխատում էին 11000 անչափահասներ: Այդ կապակցությամբ, արդեն նվիրալատ, Նանսենը գրել է. որ ինքը «Հայաստանում տեսավ աշխարհում որբ երեխաների ամենամեծ հավաքը» և «իր այցի երջանիկ պահերից մեկն էր նստել փրկված հայ երեխաների հետ և միասին ճաշակել որբի սնունդը՝ ապուրն ու հացը»:

Նանսենի ուշադրությունից չվրիպեց նաև Էջմիածինը՝ հայոց հոգևոր կենտրոնը: Նա ընդունվեց Ամենայն Հայոց Գևորգ 5-րդ Սուրենյանց վշտալի կաթողիկոսի կողմից, եղավ Մատենադարանում և ընդգծեց, որ «ի՞նքը և ի՞ր հանձնաժողովի անդամներն իրենց շատ բախտավոր են համարում՝ լինելով հայերի կուլտուրական հին կենտրոնում, հայտնելով միաժամանակ, որ ի՞նքը և ի՞ր հանձնաժողովի անդամները անելու են այն բոլորը, ինչ հնարավոր է, որպեսզի Հայաստանի կուլտուրան ծաղկի ու քաղցավանի»: Նանսենի վրա զարմացի ու հիացմունքի խոր տպավորություն է թողնում Էջմիածնի Մայր Տաճարի ու Հռիփսիմի վանքի կառուցողական հանճարի մաց արվեստը: Նա հետագայում, իր աշխատության մեջ ընդգծելով Հայ եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ազգահավաքման ու ազգապահպանության, մշակույթի, նարտարապետության ու հոգևոր կյանքի մյուս բնագավառներում, միաժամանակ, իրեն հատուկ նրբակատարությամբ, նշում է քրիստոնեական եկեղեցաշինության ասպարեզում հայ ժողովրդի առաջնությունը: Ինչպես ինքն է գրում, «Պետք է հիշել, որ Հայաստանն առաջին երկիրն էր, ընդ որում քրիստոնեությունն ընդունվեց որպես պետական կրոն: Այդպիսով այն ժամանակ չկար քրիստոնեական եկեղեցաշինության ձևերի փոխառման հնարավորություն, և հայերն ու վրացիները մաքուրով, աստիճանաբար ստեղծեցին իրենց սեփական ոճը»:

Հանձնաժողովի ծրագիրն ավարտելուց հետո Նանսենը Հայաստանի հեռագրական գործակալության թղթակցի հետ հանդիպման ժամանակ ասաց. «Հայաստանն ու հայ ժողովուրդը շատ են տուժել վերջին տասնյակ տարիների ընթացքում, սակայն ես միանգամայն համոզվեցի, որ Խորհրդային Հայաստանը, ապրելով խաղաղ պայմաններում, կարող է լիովին դարձանել իր վերքերը և վերականգնել իր տնտեսությունը: Անդրադառնալով Հայաստանի անջրդի հողերի յուրացման ու գաղթականությանը փոխադրելու խնդիրներին՝ հավաստիացնում է, որ նվրդալ վերադառնալով «ես անմիջապես աշխատելու եմ այդ հողամասերի ռոտզման նյութական հնարավորությունները ստեղծելու ուղղությամբ: Ես իմ հանձնաժողովի

կողմից հայտում եմ, որ մե՛նք պիտի անենք, ինչ որ հնարավոր է, հասցնելու համար մեր միսիայի քարեհաջող ավարտին, եթե որևէ դեպքում չկարողանանք իրականացնել այն նպատակը, որի համար եկել ենք, դրա մեղքը ո՛չ մեր հանճաժողովին է, ո՛չ էլ Խորհրդային կառավարությանը»:

Նանսենը ընտրվել է Հայաստանի Օգնության կոմիտեի «Մշտական պատվավոր անդամ» և մինչև վերջ գործուն մասնակցություն է քերել նրա աշխատանքներին արտասահմանում:

Հայաստանից վերադարձի ճանապարհին, հուլիսի 4-ին «Մարտակոչ» թերթին հայտնում է հետևյալը. «Շատ ուրախ կլինեմ, եթե իրոք կարողանամ որևէ օգտակար գործ կատարել Հայաստանի համար, որն օժտված է մեծ հնարավորություններով և ունի մի առափնի ու աշխատունակ ժողովուրդ: Ցանկալի է, որ այդ գեղեցիկ երկիրն ու ժողովուրդը, որն այնքան դժբախտություն է տեսել, վայելի խաղաղ ու երջանիկ ապագա»:

Հայաստանում Նանսենի միսիայի քարեհաջող ավարտից հետո սկսվեց նրա գողգոթան Ազգերի լիգայի լաբորինթոսում, որը շատ քիչ էր տարբերվում Հայոց Գողգոթայից: Ազգերի լիգայում Հայաստանի ու հայ գաղթականության հարցերի վերաբերյալ ընդգծված կերպով իրար էին բախվում երկու հակադիր տեսակետները՝ Նանսենյան պարզ, մարդասիրական ու նշմարիտ և Ազգերի լիգայի ու նրա անդամ մեծ տերությունների և նրանց գործակիցների շահադիտական, ֆաղափական և վերջապես՝ անմարդկային տեսակետները:

1925-ի հուլիսի 28-ին Նանսենի կողմից Ազգերի լիգային ներկայացված զեկուցագրում հստակորեն նշված էին այն բոլոր պայմանները, որոնց ապահովման դեպքում կիրառործվեր Հայաստանի անջրդի հողերի ռոտզման և գաղթականության տեղափոխման ու տեղավորման մասին նախատեսված ծրագիրը: Նա զեկուցագրում ընդգծում էր այն միտքը, որ «Հայկական Հանրապետությունը... պետք է դիտել որպես գոյություն ունեցող միակ օջախը, ուր ցրված հայերը կարող են հավաքվել»: Սակայն Ազգերի լիգան, ֆողարկելով իր ֆաղափական նկատառումները, ամեն կերպ ձգձգում է այդ պարզ հարցի լուծումը, որը ստիպեց Նանսենին մուլյն թվականի սեպտեմբերի 12-ին Լիգայի Ընդհանուր ժողովում հիշեցնել հայ ժողովրդի տառապանքներին, «Դաշնակիցների» համար նրա թափած արյան և վերջիններիս անկատար խոստումների մասին:

Սակայն Նանսենը դեռևս փայփայում է քարձրացված հարցի լուծման համար Ազգերի լիգայի հետ կապած հույսերը: Նա 1925-ի սեպտեմբերի 29-ի նիստում ունեցած իր ելույթում համառորեն քաջատրեյով «Դժվար» ու «անկարելի» հասկացությունների տարբերությունը, գտնում է, որ «դժվար»-ը այն է, որ կարելի է կատարել անմիջապես, «անկարելի»-ն այն է, որ մի քիչ ավելի ժամանակ է խլում անելու:

Նշելով խնդրի լուծման ճանապարհին եղած ու լինելիք դժվարությունները, նա ընդգծում է, որ «երևանի հանրապետությունը միակ հողամասն է, ուր մե՛նք կարող կլինենք ազգային օջախ կառուցելու հայ ժողովրդի համար: Սա կլինի իսկական հայկական օջախ, և բոլոր հայ կուսակցությունները, ինչ ֆաղափական երանգ որ ունենան, համաձայն են այդ բանում, և նրանք նորոգել են իրենց աջակցության գրավականը հանճաժողովի առաջ: Նրանք կարծում են, որ Բելգիայի չափ մի երկիր, բայց միայն 1.200.000 ազգաբնակչությամբ, կարող կլինի այժմ Եվրոպայում գտնված հայ գաղթականներին իր ծոցում տեղավորել»: Նա,

շեշտելով առաջադրված խնդրի իրագործման գործի դժվարությունները. այնու-
ամենայնիվ համարում է հնարավոր և գտնում, որ այն «...նստաշրջանի ու
կառավարությունների համար մի փորձնական պարագա է՝ հաստատելու ապագա-
յում, թե իրենց խոստումները մի քան ցերեպայանում են. թե ոչ»:

Շարունակելով ելույթը, նա անհրաժեշտ է գտնում կանգ առնել Ձեմրեռնի և
սեսիայի նախագահի արտահայտած «աշխարհի բարոյական զինաթափման» և
«միջազգային նոր հագու ստեղծման» գաղափարին և ընդգծված շեշտադրությամբ
ասում. «Առաջ է նաև, որ քավական չէ միայն ասելը, պետք է նաև գործել: Մենք
չենք կարող սպասել, որ այդ նոր միջազգային հոգին ինքնիշխան գա: Մենք պետք է
գործենք, որպեսզի ստեղծենք այն»:

Ձեռքած այն քանին, որ ժամանակի ընթացքում խորանում է նախնի
հիասթափությունը Ազգերի լիգայի նկատմամբ, որի հետ նա մեծ հույսեր էր
կապում, այնուամենայնիվ չէր կորցնում իր լավատեսությունը: Նա հայ հայտնի
հասարակական գործիչ Արշակ Սաֆրաստյանի հետ ժնկում գրուցելիս ասում է.
«Թվում է, թե արևմտյան տերությունների կառավարությունները...կմերժեն
գաղթականներին ոգնել: Երբևիցե նախատգիրը նրանց կպատմի: Ձևակածեմ
դրանում»:

Այդպես էլ եղավ:

Երբ նախնի վերջնականապես համոզվեց, որ Ազգերի լիգան մեծ
տերությունների կամո՞ ձայնողում է իր՝ տարիների փայփայած ծրագրի իրակա-
նացումը, 1927-ի սեպտեմբերի 24-ին Լիգայի ասամբլեայում ցատումնալից ելույթ
ունենցավ և, ցերեպայանելով այդ պետությունների կողմից իրենց երբեմնի
դաշնակցին՝ հայ ժողովրդին տված խոստումները, հայտարարեց. «Այս ամբիոնից
ես կոչ եմ անում Ազգերի լիգայի բոլոր անդամներին, Եվրոպայի ու ամբողջ
աշխարհի ժողովուրդներին ուրիշ ելնել՝ փրկելու Եվրոպայի պատվը, որն այնքան
ժամանակ կմնա արատավորված, քանի դեռ անկատար կմնա խոստումները»:

Մինչև Ազգերի լիգայի այդ նիստը, նախնի, մարգարեաբար կանխագայում
Արևմտաֆեդերացիաների վերաբերմունքը, գրում է. «Դուք՝ ֆեդերացիաներ,
դուք՝ պետական մարդիկ, հանգիստ բռնեք բարձրագույն բառերը, որպեսզի
մարդկանցից չկորսեք նրանց հավատի վերջին կայծը, որ չնայած ամեն ինչին,
ժողովրդի պատմության մեջ ինչ-որ սրբազան քան կա:... Արդարություն ես
որանում դու, հեզ մարդկային արարած, որտեղ ես դու ուզում գտնել այն»:

Հիասթափված Ազգերի լիգայի գործելակերպից, որը, ըստ էության, վերածվել
էր արևմտյան մեծ տերությունների ֆեդերական խաղերի իրականացման գործիքի,
մեծ մարդասերը հրաժարվեց նրա աշխատանքներին մասնակցելուց:

Սակայն նախնի այդ հրաժարականը բոլորովին էլ չէր նշանակում հայկական
հարցից ու հայ գաղթականության խնդիրներից հրաժարում:

Նա իրեն հատուկ հաստատականությամբ ու եռանդով ձգտեց այլ նախ-
պարհներով հայքայքել գաղթականությանը խորհրդային Հայաստան փոխադրելու
և տեղավորելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Նրա գլխավորու-
թյամբ ստեղծվում է Միացյալ հայկական կոմիտե, որում ընդգրկվեցին հայ
ժողովրդի բարեկամներ Անգլիայից, Ամերիկայից, Ֆրանսիայից, Բելգիայից և այլ
երկրներից, ինչպես նաև Կարմիր Խաչից ու այլ կազմակերպություններից:

Նանսենի միսիայի մարդասիրական նշանակությունը միջազգային արձագանքներ ունեցավ: Դրա վառ դրսևորումներից մեկն էլ Միջազգային Բանվորական Օգնության կոմիտեի 1928 թ. սեպտեմբերի 19-ի դիմումն էր «Մեծադու Նանսենին», որով, զնախառելով նրա հերոսական աշխատանքները տառապալներին զգնելու գործում, իր պատրաստակամությունն է հայտնում աջակցել նրան՝ հայ փախստականներին Խորհրդային Հայաստան ներգաղթելու գործին: Դիմումում ասված է. «Մենք հավատացած ենք, որ եթե Դուք Ձեր վրա վերցնեք Հայկական Հանրապետությանն զգնելու համար միջազգային գումար ժողովելու նախաձեռնությունը, մենք մեր կազմակերպության զգնությամբ կարող ենք նույնիսկ հիմա նարել մի քանի միլիոն մարկ: Մենք հնարավոր գտանք ժեն՝ Ձեզ մոտ ուղարկել մեր Կենտրոնական Կոմիտեի հերկայացուցչին, որպեսզի Ձեզ հետ բանակցություններ վարի այդ հարցի շուրջ: Մենք պատկերացնում ենք, որ Դուք կկազմակերպեք Միջազգային Կոմիտե, որի նախագահը կլինեք Դուք, իսկ մենք կմոբիլիզացնենք մեր բոլոր կազմակերպություններն աշխարհում՝ անցկացնելու համերաշխության գործադրություններ, ցույցեր, զեկուցումներ ցկարներով, հանգանակություններ»:

Նանսենն իր հայանապաստ գործունեության ընթացքում մշտական սերտ համագործակցության մեջ է եղել Հայ Բարեգործական Ընդհանուր Միության և մասնավորապես նրա նախագահ Պողոս Նուբար փաշայի և ընդհանուր ֆարտուղար Լևոն Բաշլյանի հետ և դժվար պահերին մշտապես դիմել է նրանց զգնությանը: ՀԲԸՄ-ն և նրա ղեկավարները ոչ միայն Նանսենի հավատարիմ քարեկամներն էին, այլև նյութական գործնական մեծ զգնություն էին ցույց տալիս՝ նրա ձեռնարկած մեծ գործի իրականացմանը:

Ձմայած ծանր հիվանդությամբ /Նանսենի զգայուն սիրտը սկսել էր իրեն զգացնել տալ /, նա ապաքինվելուց հետո նախաձեռնեց մի հեռավոր ճանապարհորդություն Ամերիկայի Միացյալ Նահանգների և Նվրոպայի ֆաղաֆներով, ուր ունեցավ բազմաթիվ հանդիպումներ, կարդաց հայկական հարցին նվիրված դասախոսությունների շարք, նույն թեմայով հրատարակեց մի շարք հոդվածներ, որոնցից գոյացած գումարները ամբողջապես տրամադրեց 7000 հայ գաղթականների Խորհրդային Հայաստան տեղափոխելու նպատակին:

Սակայն Նանսենի գործունեությունը չսահմանափակվեց վերը նշված խնդիրների շրջանակներում: Նա Հայաստանի ու հայ ժողովրդի մասին կարողացավ հավաքել արժեքավոր հարուստ նյութ, որն ամփոփեց «Gjennoem Armenia» /Հայաստանում / սֆանչիլի աշխատության մեջ: Այն անմիջապես թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն ու հռոմեացիներին լեզուներով:

Այս աշխատանքը նա վերջացնում է հետևյալ տողերով.

«Նվրոպայի ժողովուրդները և պետական մարդիկ հոգնել են հավիտենական հայկական հարցից: Հասկանալի է, այդ հարցում նրանք միշտ անհաջողության են մատնվել: Արդեն Հայաստան անունը նրանց ներհող խղճի մեջ հիշեցնում է այն խորտակված կամ անկատար խոստումների չարագույժ շարանը, որոնց իրականացման համար նրանք երբեք մատը մատին չխփեցին: Խոսքը վերաբերում է միայն մի փոքր, արյունաքամ, բայց տաղանդավոր ժողովրդի, որը սակայն գուրկ է նավթաբեր հողերից ու ոսկու հանքերից:

Վա՛յ հայ ժողովրդին, որ նրան ներառեցին Նվրոպական ֆաղափանության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե նրա անունը երբեք ոչ մի Նվրոպական

դիվանագետի շուրթերին չլինե՛ր: Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց: Նա իր համառ մշտական աշխատանքով սպասում էր, սպասում երկար: Նա սպասում է մինչև օրս»:

Բացարձակ նշմարիտ էր գերմանական գրող Վոլֆգանգ Զոնթագը, որ հավաստության նշան էր դնում հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած արևմտյան տերությունների դիվանագիտական խաղերի և թուրքական վայրագ բնաջնջման գործելակերպի մեջ՝ գրելով. «Մի՞թե նույնքան զայրացուցիչ չէ «կուլտուրական տերությունների» սպանիչ պատմությունը, որքան թուրքերի կատարած արյունախում մոզկալիությունը: Հայաստան... իմպերիալիզմն ինչպիսի հազվագյուտ ուժով է մերկացրել իր ողջ դաժանությունը, իր ցինիկ երկդիմի փառականությունը»:

Այստեղ անադար կլինի չեխշել Նանսենի ավագ դստեր՝ Լիվ Նանսեն-Հոյերի խոսքը այդ անմահ հումանիստի մասին հայ ժողովրդի վիճակի կապակցությամբ: Նա գրել է. «Նանսենը բազմիցս օգնել է գաղթականներին, բայց նրա վրա ամենածանր տպավորությունը թողել է հայերի ողբերգությունը: Այդ խիզախ, տաղանդավոր, բարձր կուլտուրայի տեր փոքր ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում, սկսած հնագույն ժամանակներից, տառապել է պատերազմից ու ամեն կարգի արհավիրքներից, իսկ մեր ժամանակներում նրան բաժին է ընկել մեծագույն դժբախտություն, և նրա ճակատագիրը դասավորվել է անհեթեթ կերպով: Եվ այստեղ քիչ մեղք չի ընկնում Եվրոպայի վրա. ոչ մի փորձ չկատարվեց փոխելու որևէ բան, մինչև որ թուրքերը սկսեցին ամբողջ հայ ժողովրդի հետևողական ոչնչացումը: Իսկ հետո, երբ կենդանի մնացածները փորձեցին կարգավորել իրենց կյանքը, դեկավար փառական գործիչները ցույց տվին, որ մոռացել են այդ ժողովրդի գոյության մասին: Հայրս մինչև իր վերջին օրերը չէր կարող մոռանալ այն հիասթափությունը, որ պատճառեց նրան Ազգերի լիգայի անգործությունը»:

Նանսենի՝ հաղթանակներով թագադրված փառավոր կյանքում քաջատությունն եղավ հայկական հարցը, որը դարձավ նրա կյանքի ամենամեծ, բայց անկատար գործը: Այդ կապակցությամբ ֆրանսիացի գործիչ Ռ. Ռեստիուսները գրել է. «Նանսենը հայկական հարցին նվիրաբերելով իր հոգին ու մարմինը, իրեն կրկնակի պարտավորված էր զգում: Առաջինը, անկասկած, այն պատճառով, որ նա, ելնելով մարդասիրական խոր զգացումներից, անամայից նետվում էր դժբախտների պաշտպանությանը: Երկրորդ՝ գուցե այն պատճառով, որ այդ դժբախտները հենց հայեր էին... տաղանդավոր ու աշխատասեր մի ժողովուրդ, որը երաշխեք է գործել պատմության մեջ», բայց ապրել «ահավոր ողբերգություն»: Ընդգծելով Նանսենի անկատար իղձերը հայկական խնդրում, Ռեստիուսները շարունակում է. «Այս աշխարհից հեռանալիս Նանսենի ամենամեծ վիշտը այն էր, որ առաջին անգամ նրան չհաջողվեց հասնել իր առջև դրված նպատակին»:

1930 թ. մայիսի 13-ին դադարեց քաղաքից աշխարհի տառապյալների վշտով ծանրաբեռնված Նանսենի ջերմ սիրտը՝ անհուն վիշտ պատճառելով ոչ միայն նորվեգացիներին, այլև աշխարհի ողջ առաջավոր մարդկությանը: Ժամանակակիցներից մեկի բնութագրմամբ՝ «Եթե Նանսենին ծնեց Նորվեգիան, ապա նրան կորցրեց ամբողջ աշխարհը»:

Նորվեգիան այդ օրերին ողողվեց աշխարհի տարբեր ծայրերից հոսող ցավակցական հեռագրերով: Մասնավորապես դրանցում աչքի են ընկնում Մայր

Հայաստանից ու սփյուռքից ստացվածները: Ափյուռքում ու Հայաստանում լույս տեսնող լրագրերը իրենց սրտի խոսքը ասացին Մեծ հումանիտի մահվան առիթով:

Փարիզի «Երևան» լրագրում հրատարակվեց Տ. Ջավենի խոսքը, որն անձամբ ծանոթ էր Նանսենին: Նրանում ասված է. «Գնաց Նանսենը... բայց այդ շիտակ, անխաղախ, վեհանձն նկարագրի տեր մարդու ամուլը թանկագին է խորհրդային և մասնավորապես հայ աշխատավորության համար», որովհետև «ան ամուր կեցավ անոցն կողքին, անշահախնդիր ու անայլալ անձնվիրությամբ մը, մինչև վերջին շունչը»:

Հ.Բ.Ը.Մ.-ը իր օրգանում գրեց. «հայ ազգը անմոռաց երախտագիտությամբ պիտի պահե այս բարձրահոգի մարդասերին հիշատակը: Տոբ. Նանսենի բողոքարկու կոչերը Ազգերու ընկերության ատենագրությանց մեջ պիտի մնան որպես արատ մը ֆաղափարության և արդարության անուշով գործող պետությունաց վրա: Անիկա հոյակապ ընդվզում մը ունեցավ ժնկի մեջ, վերջին անգամ, երբ Հայաստանի ծրագիրը, գոր այնքան խանդաղատանքով փայլալած էր, ջուրը ձգեցին աշխարհիս մեծերը: Իր անուշ սերտորեն կապված պիտի մնա մեր ազգին ժամանակակից փոքրակից պատմության հետ»:

Նանսենի մահից հետո նրա հիշատակին նվիրված երեկոյում Անգլիայի հայ գաղութի ներկայացուցիչը իր ելույթում նշեց. «Այդ մարդն անվախ կերպով, առանց իր մասին մտածելու, իր վրա վերցրեց մի գործ, որպիսին չէր կատարի մեծ տերությունների ոչ մի ներկայացուցիչ: Միայն նրանք, ովքեր նրա հետ մոտիկից են հանդիպել, կարող են լիովին դատել այդ խնդրի ամբողջ բարդության մասին, թե ինչպիսի վիթխարի դժվարություններով է նա պայքարել, ինչպիսի անսահման համբերություն ու տակտ է ցուցաբերել ամենաբարդ իրավիճակներում: Միայն նրանք, ովքեր իրենք են կապված եղել այդ գործի հետ, կարող են հասկանալ, թե հայ ժողովուրդն ինչքան է պարտական նրան: Նա այնքան խորն է ցնցվել հայ ժողովուրդի ողբերգությունից ու ամբողջությունից, որպիսիք նա ապրեց, որ հիշմալի իմանալով, թե ինչպիսի արգելքներ ու անախորժություններ պետք է հաղթահարել, այնուամենայնիվ, ամբողջ հոգով նվիրվեց հայ ժողովուրդի գործին և Ազգերի լիգայի ու մեծ տերությունների առաջ պարզ ու աներկմիտ ձևով շարադրեց ճշմարիտ փաստերը:

Մենք՝ հայերս, միշտ կսիրենք ու կմեծարենք նրան և խոր շնորհակալությամբ կխոնարհվենք նրա անվան առաջ...»:

Հայաստանի ժողովուրդին Նորվեգիայի Արտաֆին գործոց նախարարությանը և Ֆրիտյոֆ Նանսենի ընտանիքին հղած հեռագրում հայտնել է. «Խորապես ցնցված ենք խիզախ ճանապարհորդի, գիտնականի ու մեր անկեղծ բարեկամի՝ Ֆրիտյոֆ Նանսենի մահով: Խորհրդային Հայաստանի կառավարությունը և աշխատավոր ժողովուրդը երբեք չի մոռանա այն ջանքերը, որ գործ էր դնում մեծ գիտնականը Խորհրդային Միության և մասնավորապես Խորհրդային Հայաստանի աշխատավորությանը օժանդակելու գործում»:

Իսկ Օսլոյում Խորհրդային դեսպան Ս. Կոլոնտայը Նորվեգիայի պրեմիեր մինիստր Յու. Մովինգերին գրած նամակում նշում է, որ Նանսենը «մարմնավորում էր այն լավագույնն ու վեհը», ինչ ունի նորվեգական ժողովուրդը: Այդ «փառապանծ նորվեգացին համաշխարհային ֆաղափացի էր» և նրա «մահը անքուժելի վիշտ է պատճառում համընդհանուր մարդկությանը»: Նա ընդգծում է Նանսենի ծառայությունները խորհրդային ֆաղափացիներին, որ «նրա մարդա-

սիրական գործն ապրում է Միության ժողովուրդների հիշողության մեջ» և «իր միլիոնավոր հայրենակիցները» իրենց սրտերում վառ են պահում «մեծ ֆաղափառ ժողովրդական ու սիրելի անունը», «անհունորեն սգում նրա մահը»:

Նանսենի մահը վերջակետը չհանդիսացավ հայ և նորվեգ ժողովուրդների անխորտակ բարեկամության:

Նանսենի գծած նամապարհը շարունակվեց նոր ժամանակներում ու պալմաններում: Մեծ մարդասերի ավագ դուստր Լիվ Նանսեն-Հոյերը, շարունակելով հոր գործը, այդ բարեկամությունը բարձրացրեց մի նոր աստիճանի: «Հորս մասին» իր փառավոր աշխատության մեջ նա հատուկ գլուխ նվիրեց հայ ժողովրդի պատմությանը: Նա շարունակեց կապերը այն բոլոր հայազգի գործիչների հետ, որոնք մոտիկից և ընդհանրապես առնչվել էին Նանսենի հետ: Նա 1955 թ. ապրիլի 19-ին Նանսենի լավագույն բարեկամ Արշակ Սաֆրաստյանին գրում էր, որ՝ «Դու՛մ» հայերդ, եղի՛ եմ հորս «Սրտի զավակները», ինչպես ասում են մեզ մոտ: Ողբերգական ճակատագիրը այդ խիզախ ժողովրդին՝ նրա հնազույն մշակույթով, արվեստով, ճարտարապետությամբ և երաժշտությամբ, այդ սփռվելի երկիրը հիացրել է նրան մինչև կյանքի վերջը, առաջ բերել սեր ու կարեկցանք: Իհարկե նա հիանում էր ձեզձով: Ցանկացած մարդ, որը սիրտ ունի և ընդունակ է մտածելու, նույնը կաներ»:

Մտորելով մեր ժողովրդի մասին՝ Լիվ Նանսեն-Հոյերը գրում է. «Ձեր խիզախությունը, ձեր համբերությունը, ձեր անխախտ հայրենասիրությունը ձեզ դարձրել են ամուր ու պահպանել ձեր ժողովրդին... Մոլորակի վրա և ոչ մի այլ ժողովուրդ չունի նման հավատ»:

Խոսելով Նանսենի նկատմամբ հայ ժողովրդի տածած ջերմ սիրտ մասին, ասում է. «Ձեր շնորհակալությունը հորս և ուրիշներին, որոնք փորձել են օգնել ձեզ, հավերժական է: Ձեր հարգանքը նրա հիշատակի նկատմամբ անկեղծ է և հանդիսանում է վիթխարի հուշարժան նրան, ավելի լավ, քան ցանկացած ֆանդակը ֆարից, քան բոլոր պերճախոս քառերը, ֆանգի այն ապրում է ձեր սրտերում»:

Ստեփան Շահպազին 1955 թ. հուլիսի 19-ի գրած նամակում կարդում ենք. «Կարո՞ղ է արդյոք մարդկային երևակայությունն ընկալել այնքան ողբերգություն ու տառապանք, այնքան անարդարություն, ինչպես նաև այնքան խիզախություն ու տոկունություն: Աննվազն ես կարող եմ ասել, որ ձեր ժողովրդի մասին գրել եմ սիրով և արցունքով: Ձեր մտքերը այսօրվա Հայաստանի մասին հիանալի են: Դա ապացուցում է, որ հորս կանխատեսումը հայերի ապագայի մասին՝ նրանց ունակություններով ու աշխատասիրությամբ ճիշտ է»:

Լիվ Նանսեն-Հոյերը իր աշխատության՝ մեր ժողովրդին նվիրված բաժինը եզրափակում է հետևյալ խոսքերով. «Լավագույն հուշարժանը հորս՝ հայերի հավերժական շնորհակալությունն ու սերն է նրա նկատմամբ»:

Հազար անգամ իրավացի է Լիվ Նանսեն-Հոյերը, ֆանգի հավերժական հետ ֆայլող Մեծ մարդասերը իր հաստատուն քննությունն է եաստատել նույնպես հավերժության մշտական ուղեկից հայ ժողովրդի սրտում:

Քանի ապրում է հայ ժողովուրդը, նրա մեջ կապրի Նանսեն Մարդը, ֆանգի անմահ է մեր ժողովուրդը: Անմահ է հայ և նորվեգ ժողովուրդների բարեկամությունը: